ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/84

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7333-2019 գրությամբ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Գյումրու համայնքապետարանի 17.04.2019թ. 02/02.4/3923-19 և 29.04.2019թ. թիվ 02/02.4/4428-19 գրությունների հիման վրա, 03.05.2019թ. «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Գյումրու համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Գյումրու համայնքապետարանի 17.04.2019թ. 02/02.4/3923-19 և 29.04.2019թ. թիվ 02/02.4/4428-19 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գյումրու համայնքապետարանի կարիքների համար ծաղկեփնջերի և ծաղկեպսակների ձեռքբերման ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-15/19 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ի վերաբերյալ հարցում կատարվեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ՝ համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում եզրակացություն ներկայացվեց, ըստ որի մասնակիցն ունի 63 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչը գերազանցում է ընթացակարգի ընդհանուր նախահաշվային գնի մեկ տոկոսը /մրցույթը պայմանով է, մասնակիցը ներկայացրել է ապրանքների միավորի գները/, ուստի համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի, մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը չհամապատասխանող:»:

Միևնույն ժամանակ ներկայացրել են Գյումրու համայնքապետարանի կարիքների համար ծաղկեփնջերի և ծաղկեպսակների ձեռքբերման «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-15/19» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Նազագեղ Աննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.06.2019թ. գրությամբ դիմել է «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7333-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է նիստերի օրվա, ժամի և վայրի մասին, սակայն որևէ անձ չի ներկայացել նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Գյումրու համայնքապետարանի կողմից իր կարիքների համար ծաղկեփնջերի և ծաղկեպսակների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-15/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Մասնակիցը «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-15/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-15/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (08.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 63 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, 16.04.2019թ. թիվ 4 արանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ի հայտը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների թույլատրելի շեմը գերազանցելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7333-2019 գրությամբ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին

հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Վերոնշյալ հոդվածների դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Եթե ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Տվյալ դեպքում մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Այս դեպքում մասնակիցը ընդգրկվում է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Գյումրու համայնքապետարանի կողմից իր կարիքների համար ծաղկեփնջերի և ծաղկեպսակների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-15/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում 08.04.2019թ.-ին հայտ ներկայացրած «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (08.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 63 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 08.04.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ուստի նման պայմաններում «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7333-2019 գրությամբ «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Նազագեղ Աննա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**